
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՏԻ ԴԵՍՔԵՐԸ ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Խրիմյան Հայրիկ, Եղիա Տեմիրճիստյան, Հայր Ղևոնդ Ալիշան, Մինաս Զերապ, Կոմիտաս, Հովհ. Թումանյան, պատրիարք, կաթողիկոս, «Սիրաք և Սամուել», «Դրախտի ընտանիք», «Վանգոյժ», «Հայդոյժ»:

Նախաբան

Ազգային-հասարակական, Հոգեորմշակութային նշանավոր գործիչ, 1893 թից Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա. Վանեցի, 1820, Վան-1907, Վաղարշապատ) իր գործունեության հենց սկզբից անբասիր վարքով, ազգասիրական ու հայրենասիրական գործերով մեծ հեղինակություն է ձեռք բերել ժողովրդի մեջ: Նրա մասին գրվածական ու, պարզապես, հիացական շատ խոսքեր են զրել բազմաթիվ հայտնի գեմքեր, հիշատակել Հայրիկի հետ կապված հետաքրքրական գեպքեր և պատմություններ¹: Դեռևս 1874 թվականին՝ Հինգ տարվա կ. Պոլսո պատրիարքությունից հետո, թուրքական կառավարության և որոշ հայ բնդդիմադիրների հարուցած խոչընդուների հետևանքով, նա հրաժարվել էր այդ բարձր պաշտոնից՝ ժողովրդին ավելի մոտիկից, գործնականում ծառայելու մտադրությամբ: Խրիմյան Հայրիկին նվիրած «Մշակ» բանաստեղծության մեջ, հայրենի հողի մշակի խորհրդանշական կերպարով՝ Բաֆֆին ակնարկում էր նաև նրան հետևյալ տողերով:

... Եվ նրա աղնիով ճգանց փոխարեն
Տգեսոր փշյա պասկ է հյուսում,
Իսկ նա լի հույսերով յուր մերմն է ցանում
Եվ ապագայում հունձքի է սպասում²:

Իր վերոհիշյալ մտադրության մասին վկայում է նաև Խրիմյան Հայրիկը: «Պիտի դառնամ Հայրենիքս, — մի նամակում զրել է նա, — լռեմ, բերանս հողին տամ, թուղթ ու գրիչ սիրեմ. վասն զի փորձառությամբ հասկցա, որ այս աշխարհին մեջ մարդ մեծ պաշտոնի գուխս անցնելով կարող չէ այնպես մեծագործել, ինչպես յուր և ազգին փափագն է»³: Հատկանշական է, որ Խրիմյանի մասին նման միտք է հայտնել նաև ժամանակի հայտնի դեմ-

* Ներկայացվել է 22. I. 2021 թ., գրախոսվել է 02. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 30. II. 2021 թ.:

¹ Տե՛ս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, 260 էջ:

² Բաֆֆի. Երկերի ժողովածու տասներկու հատորով, հ. 1, Երևան, 1983, էջ 189:

³ Խը ի մ յ ա ն Հ ա յ ր ի կ. Երկեր, Երևան, 1992, էջ 7:

Քերից մեկը՝ Շուշիում ծնված խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տիգրան Նազարյանը: Համոզված լինելով, որ Խորիմյանն ու Ալիշանը հավասարագոր մեծություններ են ազգի համար ունեցած իրենց նշանակությամբ՝ նա գրում է, թե «... ճակատագիրը խլեց Խորիմյան Հայրիկից նրա խակական կոչումը: Բերեցին ՎեհԱՓԱՆ տիտղոսը տվին, Վեհափառի չորս պատի մեջ շղթայեցին, պահանջելով, որ Ջինջ եթերում սավառնող ԱՐԾԻՎԸ թառ լինի Աթոռի վրա»⁴: Այդուհանդեռձ, 1876 թ. Վանի մեծ հրդեհի ազդեցության տակ գրած «Վանգոյժ», ապա նաև 1877–1878 թթ. ոռություրքական պատերազմի աղետալի հետևանքների արձագանքը հանդիսացրող «Հայգոյժ» արձակ քնարերգական գործերի համար նա իրավամբ հոչակվել էր «ԺԹ գարու Խորենացին»⁵: Ուշագրավ է նաև մեծն Կոմիտասի վկայությամբ մեզ հասած պատմություններից մեկը. «Գերմանացի մի հնախույզ հետաքրքրվում է Հնագիտական արժեք ունեցող իրերով: Երբ Էջմիածնում նրան ներկայացնում են Խորիմյանին, վերջինս դիմում է թարգմանչին.

— Հսեք, որ ես թանկագին հնություն մը ունիմ. քանի՞ տարվան կենթադրե:

- Հինգերորդ դարի, — փորձում է գուշակել հնագետը:
- Անկեց ալ հին, — հուշում է կաթողիկոսը:
- Քրիստոսի ժամանակվա:
- Անկեց ալ հին:

Հնախույզի աչքերը վառվում են հետաքրքրությունից, որ աստիճանաբար փոխվում է ոգևորության.

— Տեսնեմ, Վեհափառ, ինչ է այդ թանկագին հնությունը:

— Իմ ազգս է, — կշտամբող շեշտով պատամխանում է Խորիմյան Հայրիկը, — Քրիստոսեն ալ հին, Մովսեսեն ալ. իմ թշվառ ազգը: Անտեսած այս թանկագին հնությունը հին քար մը կամ առարկա մը փնտրելու կելլեք»⁶:

Զափազանց ուշագրավ է նաև Կոմիտասի աշակերտներից Աղավնի Մեսրոպյանի հուշային մի դրվագ՝ հայոց երեք մեծերի հոգեմտավոր կապերի տեսանկյունից: «1907 թվի գարնան, երբ առաջին անգամ Փարիզի հայոց առաջնորդարանը գացինք, — պատմում է նա, — այնտեղ Կոմիտասի առանձնասենյակին պատին տեսանք Խաչատուր Աբովյանի մեծապեր լուսանկարը: ... Այդ օրերեն մեկը, Աբովյանի լուսանկարով հետաքրքրվող հյուրերուն Կոմիտաս հետևյալը ըսավ. «Այս Խաչատուր Աբովյանի լուսանկարը իմ ամենասիրած իրս է. իմ էության հետ մաս կազմելով ... Մոտ կամ հեռու՝ որ ճամփորդեմ՝ հետո կտանիմ զայն: Այս թանկագին նվեր-Հիշատակը ինձ տվավ Խորիմյան Հայրիկը՝ իր կաթողիկոսության առաջին օրերուն»⁷:

Համազգային մտածողության տեր գործիչը

Խորիմյան Հայրիկը համազգային մտածողության տեր գործիչ էր: Նրա համար ամենից կարևորն աշխարհասփյուռ հայության համախմբումն ու

⁴ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 163:

⁵ Խը ի մ յ ա ն Հ ա յ ր ի կ. նշվ. աշխ., էջ 8:

⁶ Նույն տեղում, էջ 12:

⁷ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 236:

միասնականությունն էր՝ հանուն հայրենի ժողովրդի և հայրենիքի առջև ծառացած բարդ ու դժվարին խնդիրների լուծման։ Ահա թե ինչու, ամեն առիթով նա հրավեր էր կարդում հայրենիքը լքած բոլոր կարող ուժերին, համոզում, բարոյապես շահագրգոռում էր վերադառնալ՝ միասնաբար շենացնելու Հայոց տունը։ Մի որոշ ժամանակ Փարիզ տեղափոխված և մեկուսի կյանք վարող անվանի իմաստասեր ու բանաստեղծ Խաչատուր Միասքյանին գրած նամակում նա նշում էր «Այդ հրաշալիք մի է Փարիզի դրախտին մէջ այդպէս ճգնաւորական կեանք վարել», բայց նաև հորդորում էր վերադառնալ հայրենիք՝ վատահեցնելով, որ անհիմն են նրա կասկածները, «թե Հայր տակաւին անսիրող է իմաստութեան»։ «Սիրեմ զքեզ, վերցո՛ւր այդ կասկածը,՝ գրում է նա, – … Խրիմեան Հայրիկ իւր կերած հացէն քեզ նման իմաստասիրաց բաժին կը հանէ. նա սովոր է պատուել իմաստութիւն։

Չեմ մոռնար, կը յիշեմ տակաւին, դու Ծաղկոցաձորի սովորական երկասիրող մշակն ես։ Ես ալ քեզ նման սիրահար եմ այդ Անւոյ պարտիզին։ Արի՛, ե՛կ որ միասին մշակենք մեր հայրենի պարտէզ։ Քեզ նման ե՛ս եւս խմբագիր եմ, քան թէ Պատրիարք»⁸։

Երբ 1887 թ. հուլիսի 27-ին Զեյթունում բռնկված հրդեհի ճարակ դարձավ 1.000 տուն՝ անապաստան թողնելով 8000 զեյթունցիների, սեպտեմբերի 12-ին Հայրիկը նամակ հղեց նաև հեռավոր Սանկտ Պետերբուրգի նորաբաց «Արաքս» հանդեսի խմբագիր Սեմյոն Գուկամիրյանցին։ «Ուրախ եմ շատ որ ձեռնարկած էք մի թերթ հրատարակել և անունը «Երասմ» մկրտած էք։ Մ՛Ն, հայու տարագիր որդիքներ. Նեվա գետէն Երասմի կ'յիշեն։ Կ'օրհնեմ ձեր այդ ձեռնարկ որ յաջողիք արդիւնաշատ գործել։ … Աշխատի՛ր ուրեմն դու ևս քո անձնութրութեանդ պարտք կատարել։ «Երասմիդ» գետով ջուր հասուր ջուր, որ մաղենք Զէյթունին կրակ և վերատին կանաչեն Զէյթունին խանձողած մարդասունկ անտառներ»⁹ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.)։

Հովհ. Թումանյանը, պատմելով Խրիմյան Հայրիկի հետ Թիֆլիսում հաճախակի հանդիպումներից մեկում նրանից ստացած իր տպավորությունների մասին, վկայում է, որ նա «… շատ էր սիրում ուժ<անավոր> գրելը և իրեն նշանավոր բանաստեղծ էր համարում։ – Դիշերները քունս չի տաներ, – ասում էր, – սենյակում կշրջեմ, կծինեմ ու կդրեմ»։ Մի օր մտնելով Թիֆլիսի առաջնորդարան՝ տեսնում է այնտեղ հավաքված մի խումբ խնդիրատուների։ Ամեն մեկը՝ ծեր թե մանուկ, մի-մի խնդիրք ուներ սիրելի Հայրիկին։ Եվ վերջինս, համբերատար լսելով բոլորին, կարգադրում է լուծել նրանց խնդիրները՝ «Եվ այսպես ամբողջ օրը», զարմանքով արձանագրում է բանաստեղծը¹⁰։ Մեկ ուրիշ մանրապատումում 1896-ի կոտորածից մազապուր, Սասունի կողմերից մի խումբ փախատականների հետ էջմիածին հասած Ա. Գյուղի ծերունի տեր Սարգսի՝ քսան հոգանոց իր գերդաստանի գոհվելու մասին գույժին Խրիմյանը պատասխանում է. «Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար, … այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան … Ո՞ւմն է շատ, տեր Սարգս» … Եվ երբ քահանան ցնցվում է և լուսմ, Հայ-

⁸ Տե՛ս Թե ոդիկ. Ամէնուն տարեցոյցը, կ. Պոլիս, 1916–1922, էջ 14–15։

⁹ «Արաքս» (Ս. Պետերբուրգ), 1887, գիրք Ա, էջ 145–146։

¹⁰ Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 5, Երևան, 1994, էջ 71–74։

րիկն առաջարկում է մոտենալ իրեն, աջը դնել գլխին և օրհնել, որպեսզի այդ մեծ վշտին դիմանա: «Ասավ ու գլուխը խոնարհեց, – գրում է Թումանյանը: – Քահանան շտափեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսակ աղոթք մըմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով ... Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին ... Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը ...»¹¹:

Խրիմյանի «Երկեր»-ի կազմող և առաջաբանի հեղինակներ Ա. Մաղոյանն ու Հ. Պետրոսյանը իրավացիորեն նշում են, որ պաշտոնյաների և մտավորականության ուշադրությունը «ղեալի երկիր» ուղղելու Սրբազն Հայրիկի ջանադիր գործելակերպը հող նախապատրաստեց «հասարակական-դրական այն շարժման համար, որ 90-ական թվականներին հայտնի դարձավ «գալառական գրականություն» հորջորջումով և փոքրինչ ավելի ուշ ձևավորվեց իբրև գրական հոսանք»¹²: Հակոբ Օշականը ևս հավաստում է, «թէ իր աշակերտ Արուանձտեանցով, իրեն գործակից, իր իտեալին հաւատարիմ արուեստագէտներու որոշ խումբի մը կողմէ հրապարակ նետուած դաւառական գրականութիւն վարդապետութեան իբր թելադրիչ, այս մարդը ծառայում է հայոց գրականութեան՝ դարձյալ դուրս է տարակոյսէ»¹³:

Խրիմյան – Ալիշան փոխհարաբերությունը

Վերը շարադրվածի համատեքստում կարեսը է անդրադառնալ նաև Խրիմյան–Ալիշան փոխհարաբերությանը: Խրիմյան Հայրիկը բարձր էր գնահատում «Միխիթարյան գրավաստակ Հայրերի» ծառայությունները: Նա առանձնակի սիրով էր կապված իր «ծննդակից և սննդակից» Հայր Ղեոնդ Ալիշանի հետ, ու այդ վերաբերմունքը փոխադարձ էր: Ազգային գործիչ Միքայել Զալյանը «Միխիթարյան մենաստանում» վերնագրված իր տպավորություններում վկայաբերում է արդեն գրեթե ութսունամյա Ալիշանի հետ հանդիպման հետևյալ դրվագը:

«– Յոթանասունինն տարիս լրացավ, «Զեր» Խրիմյան ինձնից հարյուր օրով մեծ է, – ասաց նա հմուտ հնագետի ճշտությամբ:

– Ինչո՞ւ «մեր», և ոչ թե «ձեր», – նկատեցի ես:

– Ինչպես թե «մեր»:

– Զէ՞՞ որ նա էլ տաճկաստանցի է:

Այո՛, ճշշտ է, – պատասխանեց նա ծիծաղելով»¹⁴:

Վենետիկի Միխիթարյանների մոտ ուսում առած Արքիար Արքիարյանը համոզված էր, որ «... երկու եկեղեցականք կան, որոց գեմքը նայելով երբեք հայ մը չը կրնար հագենապ՝ Խրիմյան և Ալիշան»¹⁵ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.): Իսկ Տիգրան Նազարյանը յուրահասուկ համեմատական է անցկացնում հայ ազգի այդ երկու հսկաների միջև. «Եթե համայն հայության մեջ անխտիր բոլոր խավերում անկետայի ենթարկվեր թե ո՞վ է ժմ՛ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը,

¹¹ Նույն տեղում, էջ 69–71:

¹² Խրիմյան Հայրիկ. նշվ. աշխ., էջ 15:

¹³ Յ. Օշական. Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Անթիլիաս, 1956, էջ 309:

¹⁴ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 83:

¹⁵ Նույն տեղում, էջ 9:

կամքը, տեսչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լիներ, – գրում է նա, – անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝ ԽՄԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ... և ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ: Իսկ սրանցից որի՞ն կտար առավելությունը, միաձայն ձեռնպահ կմնար և չէր կարող ձեռքը խղճին ասել, Խրիմյան Հայրի՞կ թե Հայր Ղեռնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենարար, բուժիչ ու սննդարար ճառագայթներ եղած են, համայն հայության սիրու-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կոռող կոփողներ: Գրագետը կարդացել է սրանց հրաբորքոք երկերը, անգրագետը լսել է աշուղի տաղերը, Խրիմյան Հայրիկին ու Հայր Ղեռնդ Ալիշանին ձոնված, և հավատում-պաշտում է նրանց իբրև իր հայրենիքի նախախնամություն»¹⁶:

Ինչ մնում է Հայր Ղեռնդ Ալիշանի նկատմամբ Խրիմյան Հայրիկի վերաբերմունքին, ապա դա լավագույնս արտացոլված է բանասեր, պատմաբան, խմբագիր Հովհաննես Թորոսյանի հուշերի մի դրվագում, որտեղ պատմվում է Թիֆլիսում 1901 թ. նոյեմբերին վախճանված, «Հավատով կաթողիկ» Հայր Ղ. Ալիշանի հոգեհանգստի կարգը կատարելու հարցի շուրջ առաջադիմականների («Աղբյուր-Տարագ», «Մշակ») և պահպանողականների («Նոր-Դար») կատաղի պայքարի ու երկարատև վիճաբանությունների մասին: Հիշյալ ժողովածուն կազմող գրականագետ Սուլեն Շտիլյանը ծանոթագրում է, որ «կոնսիստորիայի նախանդամ և ս. Սարգիս Եկեղեցու վանահայր Գարեգին Հովսեփիյանը ոչ միայն արգելում է հոգեհանգիստը կազմակերպելու համար տարփող նախապատրաստական աշխատանքները, այլև կարգադրում, որ տվյալ օրվա պատարագի ժամանակ ննջեցյալների անունները հիշատակելիս Ալիշանի անունը չհիշատակվի»: Թիֆլիսում հրավիրված մշակոյթի գործիչների ընդհանուր ժողովում որոշվում է Հարցը հասցնել կաթողիկոս Խրիմյանին, որն էլ կայացնում է վերջնական որոշումը: «Իրեն հատուկ ուղղակիությամբ Խրիմյանը, իրազբությանը ծանոթանալուց հետո, կարգադրում է Հայկական բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ կատարել Ալիշանի հիշատակին, – գրում է Ս. Շտիլյանը, – պատճառաբանելով, որ հավատով կաթողիկ լինելը չի կարող արգելք լինել մենի համար, որն ամբողջ Հայ ժողովրդի նահապետն է»¹⁷ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.):

Խրիմյան Հայրիկը Եղիա Տեմիրճիպաշյանի գնահատմամբ

Խրիմյան Հայրիկի հետ ժամանակի մեկ այլ ինքնատիպ դեմքի՝ գրող, հրապարակագիր, իմաստասեր, մանկավարդ ու խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանի առաջին անմիջական շփումները տեղի են ունեցել դեռ XIX դարի 60-ական թթ. սկզբներին՝ Հասպյուղի (Կ. Պոլիս) Ս. Ներսիսյան վարժարանում ուսանելու տարիներին: Ի դեպ, վարժարանում նրա դասընկերներն էին հետագայում հանրահայտ ազգային-մտավորական գործիչներ Ռեմեսոս Պերպերյանը, Մինսս Զերազը և ուրիշներ: Հիշատակելի է, օրինակ, ժողովրդի հետ նաև նրանց մեծ ոգեստությունը 1869 թ. Խրիմյան Արքազանի՝ Կ. Պոլսո պատրիարք ընտրվելու կապակցությամբ: Մ. Զերազը նույնիսկ հինգ և

¹⁶ Նույն տեղում, էջ 163:

¹⁷ Նույն տեղում, էջ 244:

Կրկներգերից բաղկացած ծավալուն բանաստեղծություն էր գրել՝ նվիրված նորընծա պատրիարքին՝ «Հայրենանուէրն Խրիմեան. Պատրիարք Պոլսոյ ՈՂջոՅն» վերնագրով.

... Քաղցր Աստուծոյ մ'անո՛յշ պատգամ,
Դո՛ւ, խաչակիր խաղաղութեան,
Շանթից փոխան՝ մեղր հոսէ՛ մեզ.
Հեղութեամբդ, ո՛հ, բարձրացո՛ զ'մեզ ...
Եւ, մութի մէջ, Հայաստանցին
Թէ կորնչի հեծեծագին՝
Հասցո՛ւր անոր՝ ջահ լուսաւոր.
Չ'ե՞ս մի լուսոյ Դու վե՛հ զինուոր ...¹⁸

Կ. Պոլսի «Մասիս» օրաթերթը տեղեկացնում էր նաև, որ «Խասպիւղի Նուպար-Շահնազարեան վարժարանի աշակերտ արգոյ Պ. Մինաս Զարագլեան պատանւոյն յօրինած եւ լրագրոյս 924 թուոյն մէջ հրատարակուած գեղեցիկ երգը՝ արգոյ Պ. Տիգրան Չուխանեանի աշխատասիրութեամբ եղանակաւորւած եւ ձայնագրութեամբ տպուած է Ամեն. Խրիմեան սրբազանի ուկեզօծ պատկերովը հանդերձ»¹⁹:

1885 թվականին «Հիւանդութիւնա» գրության մեջ՝ իր բուժող բժիշկներին՝ Սիմոն Սեղբոյանին ու Տիգրան Գաբամաճյանին երախտագիտության խոսքեր ուղղելուց հետո, Եղիա Տեմիրճիպաշյանն ավելացնում է՝ «Հուսկ ուրեմն յաւէտ շնորհապարտ պիտի մնամ այն անձանց՝ ոյց գլուխն ամենասիրելի Խրիմեան Հայրիկն՝ որք անձամբ կամ գրով սփոփեցին զիս հիւանդութեանս միջոցին²⁰ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.): Նույն թվականին Եղիան մեծ ափսոսանքով է նշում, որ «տկարութեան պատճառաւ» չի կարողացել մասնակցել Հասգյուղի Ս. Ներսիսյան վարժարանի («իւր բարոյական որորանին», ուր «երբեմն ուսանող եւ այժմ ուսուցիչ» էր ինքը) Սրբոց Թարգմանչաց և իր պաշտպան սուրբերին՝ Ներսես Շնորհալուն և Ներսես Լամբրոնացուն նվիրված «մեծագոյն տօնին», քանզի Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի մահից հետո, այդ տարի Խրիմյան Սրբազան Հայրիկին էին հրավիրել պատարագելու, օրհնելու և ղեկավարելու հանդիսությունները: Նա իր «Շարժում»-ի մեջ մեծ պատկառանքով է արձանագրում, որ «Հայրիկն օրհնեց եւ խրախուսեց ըզ Ներսիսեան սանունա: Հետեւեալ օրն աղ բարեհաճեցաւ Նորին Ամենապատուութիւնն՝ ներկայ գտնուիլ Ներսիսեան սանուց պատուանիշներու բաշխման, ի խրախոյս աշակերտաց, ուսուցչաց եւ պատուարժան Հոգաբարձութեան ...»²¹: Երկու տարի անց Հայրիկը մասնակցում է նաև Եղիայի Հորեղբորորդու՝ ծանր հիվանդությունից հետո 26 տարեկանում մահացած Գալուստ Տեմիրճիպաշյանի հուղարկավորությանը՝ իր

¹⁸ «Մասիս» (Կ. Պոլիս), 1869, թիւ 924:

¹⁹ Տե՛ս «Մասիս», 1869, թիւ 927:

²⁰ «Գրական եւ Խմաստասիրական Շարժում» (այսուհետ՝ ԳիՇ) (Կ. Պոլիս), 1885, տեսդ տասներորդ եւ մետասաներորդ, էջ 178:

²¹ Նույն տեղում, էջ 178–179:

դամբանական խոսքում «սրտառուչ բանիւք» հիշատակելով նրա բոլոր «բարի բարի յատկութիւնները»²²:

Հատկանշական է յուրովի արձագանքելով իր մելամաղձոտ խառնվածքի և էության մասին տարածված կարծիքին՝ Եղիան վկայակոչում է Խրիմյան Հայրիկին, որն օրեր առաջ հարցրել էր իրեն՝ «Դո՞ւ տրտմութիւնը կը փնտուեա, թէ տրտմութի՞ւնը՝ քեզ»։ Եվ ինքը պատասխանել էր՝ «Վերջինն աւելի ճշմարիտ է, Սրբազն Հայրի՛կ», ըստ էության՝ խոստովանելով, որ իր տիրության, տրտմության թե մելամաղձության բուն աղբյուրը կամ պատճառն ազգի անմիսիթար, ցավագին վիճակն է²³։ Կարծում ենք՝ այստեղ ավելորդ չէ նշել նաև Ե. Տեմիրճիպաշյանի այն խոստովանությունը, թե Պերպերյան վարժարանի «մեծարդիւն Հիմնադիր-Տնօրիչն» Ռ. Պերպերյանը «ինձ հետ վարժապետ ունեցաւ Հայոց մեծագոյն Պատրիարքն եւ Հայոց մեծագոյն ուսուցիչն, Տ. Ներսէս Վարժապետեանն եւ Տ. Մատաթիա Գարագաշեանն. Որ ինձ հետ ներշնչող ունեցաւ Հայաստանեաց երկու հոգեշունչ վարժապետներ ու վարժապետներ, Եղիշէն եւ Խրիմեան Հայրիկին»²⁴։

Ե. Տեմիրճիպաշյանը մեծ ակնածանք էր տածում Խրիմյան Հայրիկի նկատմամբ՝ նրան գնահատելով ոչ միայն որպես ժամանակի ազգային ու կրոնական արտակարգ գործիչներից, այլև ստեղծագործական ձիրքով օժտված անհատականություններից մեկը, թեև նրա կարծիքները մինչ այժմ գրեթե չեն հիշատակվել։ Դեռ 70-ական թվականների վերջին թվարկելով խմբագիր-հրատարակիչ Ղուկաս Պալտագարյանի «Արշալոյս»-ից հետո Հրապարակ ելած պարբերականները՝ նա նշում է նաև. «Ունեցանք Արծուի Վասպուլական, ոյր սրբազն հեղինակն իբր արծիւ կը սաւառնի այսօր Հայ Հորիկոնին վրայ»²⁵։ Տարիներ անց իր կրկնակ հերոսներից մեկի՝ Կատուի բերանով Ե. Տեմիրճիպաշյանը հաստատում է. «Անտարակոյս դիրքեր կան որք գործքեր են, եւ այսպէս են Սրբազն Հայրիկի գորքերն ընդհանրապէս. սակայն Խրիմեան միայն գրիչով չէ ճարտար, այլ լեզուով ալ, այլ ձեռքով ալ ճարտար ու զօրաւոր է։ Ինք ա՛յն Սահմանադրական պատրիարքն եղաւ, որ այլ եւ համարձակեցաւ, այլ եւ կարօղացաւ նոր թուական բանալ Հայոց Պատրիարքութեան, Հայոց ազգութեան համար. ... Խրիմեան կը մնայ ժողովրդական»²⁶։ Ավածի մասին է վկայում նաև այն փաստը, որ Ե. Տեմիրճիպաշյանը Խրիմյանին արժանի էր համարում եկեղեցական ամենաբարձր դիրքերին։ «Սրբազն Հայրիկ Նար-պէյ Սրբազնի տեղ Ատենապետ ընտրուեցաւ Կրօնական ժողովոյ, — աղդաբարում է նա, և ապա ավելացնում, — Բայց ատի բարձրացո՞ւմ մ'է Հրաւիրակին համար. Էջմիածնայ գաւն, ահա հոն պարտէր բարձրամասլ Խրիմեան, Հայ եկեղեցականաց ամենէն ժողովրդականն»²⁷ (ընդգծումը մերն է.՝ Պ. Դ.): Իշարկե, ինչպես ցույց տվեց ժամանակը, նա չէր սիսալվում, ընդհանենը մի քանի տարի անց՝ 1892 թվականին,

²² Գի՛շ, 1887, տետր վեցերորդ, էջ 115։

²³ «Երկրագունտ» (Կ. Պոլիս), 1886, թիւ 4, էջ 159։

²⁴ «Երկրագունտ», 1886, թիւ 7, էջ 297։

²⁵ «Նոր կեանք» (Կ. Պոլիս) 1879, էջ 35։

²⁶ Գի՛շ, 1886, տետր իններորդ, էջ 172։

²⁷ Գի՛շ, 1886, տետր ութերորդ, էջ 159։

չնայած եղած բոլոր խոչընդոտներին, Խրիմյան Հայրիկն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս:

1886 թ. մեծ շուքով տեղի է ունենում Ազգային Սահմանադրության 26-րդ տարեղարձի հանդեսը: «Եւ թէպէտ Հայ երիտասարդութեան մեծապանծ ներկայացուցիչք բոլոր չէին գտնուէր հանդիսավայրն, – գրում է Ե. Տեմիրճիպաշյանը, – այլ բացակայց կը փոխանակէր բարձրաշնորհ Խրիմեան Սրբազն Հայրիկ, որ պատարագեց, քարոզեց ու բանախօսեց, հոգւոց ու սրտից ու մտաց վրայ այնպիսի ներդործութիւն մ’ընելով, զոր անտարակոյս ոչ մին ի Հայ եկեղեցականաց այսօր կ’ընէ»: Սրբազն Հայրիկի արտաքին ու ներքին հմայքն այնքան մեծ էր, որ Եղիան չի կարողանում զապել իր ոգևորությունն այդ պահի ազգեցությունը նկարագրելիս. «Դիմաց աննման վեհութիւն, լուսամտութիւն մը՝ որ չը տեսնուիր յԵւրոպա կրթուած Հայ եկեղեցականաց վրայ, ձայն մը՝ որ երաժշտութեան կը նմանի, խօսքեր՝ որք սրտի փափկութիւն ու մտաց նրբութիւն կը յայտնեն միանգամայն, եւ հասակ մը բարձր՝ որ արդէն կը կորանայ եւ որ պատկառանք ու միանգամայն տրոտմազին խոհանք կ’ազդէ. Այս ամենն եզական տպաւորութիւն մը, այո՛, կ’ընէ մարդուն վրայ, Հայուն վրայ, զի այդ եկեղեցականն իրաւամբ կոչուած է Հրեշտակ Հայաստանեայց»²⁸:

Այս կարծիքն ու գնահատականը երբեք չի լքել Եղիային: Երկու տարի անց՝ խոսք բացելով Կ. Պոլտ չորս նշանավոր պատրիարքների «ալեւոր այլ անձերանալի» Մկրտիչ Խրիմյանի, Ներսես Վարժապետյանի, Խորեն Աշքբյանի և Հարություն Վեհապետյանի մասին, նա դարձյալ նշում էր, որ «... ընդհանուր Հայութեան վերաբերեալ խնդրոց մէջ ոչ ոք աւելի ձեռնհասութիւն ու հեղինակութիւն ունի քան Խրիմեան: Իր ժողովրդականութիւնն իր վարդապետութեան օրերէն սկսեալ անհուն է ...»²⁹:

Ե. Տեմիրճիպաշյանի համոզմամբ, Խրիմյան Հայրիկի անհաստականության մեծությունը չափելի էր ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մասշտաբների մեջ: 1885-ին Հիշատակելով Վիկտոր Հյուգոյի ցավալի մահվան մասին՝ նա անմիջապես էլ անցում է կատարում Հայրիկի այցին Կ. Պոլիս. «Մինչդեռ Փուանսացիք ի Բարիգ աստուածավայել մեծարանօք կը շրջապատէին իրենց մեծագոյն բանաստեղծին դադաղն, – գրում է նա, – Հայք ալ ի Կոստանդնուպոլիս կ’երթային ընդ առաջ եկեղեցականի մը, որ թերեւս Հայ ազգին համար այն եղած է ինչ որ Վիկտոր Խոկո Փուանսական ազգին համար»: Այսուհետեւ նշելով Խրիմյանի բազում արժանիքները՝ խոսքն ավարտում է հետևյալ բառերով. «... համայն Հայութեան մէջ չը կայ ոք որ Հայրիկի չափ մէր ազգած ու լոյս ափուած ըլլայ իւլ շուրջ. Ամենուրեք ուր Հայ կայ, Հայրիկին հետքն հոն կայ. Համայնուրեք իբրեւ Հրեշտակ երեւցած է նա, քարոզելով լուսաւոր եւ ոգեւոր լեզուով Ավետարանի բանն, զոր ոչ է թափանցած այնքան խորին կերպիւ – եթէ ոչ մեծն Հիւկո ...»³⁰:

Ե. Տեմիրճիպաշյանի ծածկանուններից մեկը՝ Մելանիան, «Աղջկան մը օրագիր»-ում անժաքույց հիացմունքով է Հիշատակում Խրիմյան Հայրիկի՝

²⁸ «Երկրագունտ», 1886, թիւ 5, էջ 240:

²⁹ «Երկրագունտ», 1888, թիւ 11, էջ 482:

³⁰ Գիշ, 1885, տեսոր եօթերորդ, էջ 132–134:

Հետագայում հանրահայտ դարձած «ինձորի ճառն», որը, ըստ էության, մի գեղեցիկ մանրապատում է ինքնին: «Խնձորի պատմութիւնն: Ո՞վ չը գիտէ զայն, – զրում է նա: – Սրբազն Հայրիկ, այն նստին մէջ ուր պիտի կատարուէր Պատրիարքական ընտրութիւնն, ի բեմ կ'ենէ եւ կը սկսի մին հոգեխանդ ու մտազուարճ միանգամայն այն ատենաբանութիւններէն, որոց գաղտնիքն ինք միայն ունի. եւ ոյց յանդգնութիւնք Հայրիկի մը միայն կրնան ներուիլ: Հայրիկ Հայ գաւառոց վիճակին վրայ խօսելով, դոցա միոյն մէջ կը կենայ, զմայելով կը զմայի իր մէկ անուանի բերքին վրայ: Եւ ահա Վասպորականի արծիւն՝ պարզելով իր փայլակնարագ թեւերն՝ ակնթարթի մը մէջ իտափա կը հասնի. այդ բերքն հոն ալ կ'արտադրի: Եւ իրիմեան կը գուգակշունէ Հայկական խնձորն եւ իտալական խնձորն: Այնքան լաւ կը նկարագրէ մին թէ՛ միւսն, որ երեսփոխան Տեարք տենչ կ'ունենան ճաշակել երկու խնձորներն ալ: Հայրիկ կ'իջնէ բեմէն: Երեսփոխանաց տենչն, ատենաբանութեան նման տարօրինակ, անիրանալի էր անշուշտ. մարդս խնձոր մը միայն կրնայ ճաշակել միանգամայն: Այս անհնարութեան առջեւ, ժողովոյն տենչն ալ փոխուեցաւ, վերածուեցաւ, վերածիւեցաւ: Եւ Ազգն նոր Պատրիարքէն գոհ է ...»³¹:

Հայտնի է, որ Ե. Տեմիրճիպաշյանը կրոնի, եկեղեցու բարեշրջության խնդիրն անջատ չէր դիտարկում կրթությունից: Նա համոզված էր՝ աշխարհականներն ու եկեղեցականներն ամենևին չէլ «զատ մարմին չեն», ավելին՝ ազգային կյանքի այդ կարևորագոյն ոլորտները (նա ավելացնում էր նաև տնտեսությունը) «անձկագոյն յարաբերութիւն ունին» միմյանց հետ, որը, սակայն, թերևս, «չերեւիր» կամ «չը թուիր» առաջին հայցքից³²: Ահա թե ինչու հայտարարելով, թե «... պատկերք, երգք, սաղարթք, ճառագայթք, ծաղկունք, բուրմունք աւելի հարկաւոր են, այո՛, մանկանց դպրատան քան Աստուծոյ տան մէջ», նա համոզված էր՝ «Արծունի քահանայն զիս չը պիտի յանդիմանէ սոյն բանիցս համար, ո՛չ ալ պիտի յանդիմանէ զիս իրիմեան Սրբազն Հայրիկ, եւ ոչ երբեք անշուշտ իորէն Նար-Պէյ Սրբազն, որ արտասանած է անուանի, անմոռանալի խօսքն. «Եկեղեցւոյն նախագաւիթն է դպրոցն». Եւ այդ երեք եկեղեցականաց հաւանութիւնն ինձ բառ է»³³ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.):

Բնորոշ է, որ իրիմյան Հայրիկը, որպես կանոն, տարվա գրեթե բոլոր կրթական հանդեսների «անհրամեշտ նախագահն» էր և շատ անգամ՝ իր ելույթներում վեր էր հանում նաև ազգային կրթության թերի կողմերը, օրինակ, փափագ հայտնելով՝ «զուտ գրական ու գիտական կրթութեան զուգընթաց ըլլար արհեստագիտական կրթութիւնն որ գոյութիւն չունի տակաւին յոյժ տարաբաղդաբար»³⁴: Սակայն նրա այդ ճառերը երբեմն միանշանակ չէին ընդունվում ժողովրդի տարբեր խավերի կողմից: Նման իրավիճակների ներկայացման համար Ե. Տեմիրճիպաշյանը դիմում էր նաև իր սիրած զրական հնարքներից՝ Ընթերցող-Խմբագիր երկխոսությանը: Դրանցից մեկում Ընթերցողը, օրինակ, իր վիրավորանքն է հայտնում այն

³¹ «Երկրագունտ», 1888, թիւ 11, էջ 513:

³² Գիշ, 1883, տետր Ե, էջ 90:

³³ Գիշ, 1886, տետր ութերորդ, էջ 147:

³⁴ «Երկրագունտ», 1886, թիւ 7, էջ 316:

բանի համար, որ ինչ-ինչ շրջանակներում «զրին վեցուցին Հայրիկը. Քիչ մնացել է ժողովուրդը պօռայ պիտի եղեր որ ա՛լ Խորիմեան Հայրիկը պարզեւաբաշխութեան հանդէսներուն մէջ բերանը չի բանայ», որովհետև քննադատում է դպրոցների վիճակը: Խմբագիրը նկատում է. «Բայց ես ալ քանի տարիէ ի վեր կ'ընեմ նոյն բանն օրագրաց մէջ թէ՝ պարզեւաբաշխութեան հանդէսներու մէջ. Եւ դեռ ոչ ոք համարձակեցաւ ի մասնաւորի կամ ի հրապարակի պարսաւել կամ քննադատել զիս»: Սակայն Ընթերցողը բավարարված չէ. «Զեր ետեւէն ալ շատ բան խօսող կայ, – ասում է նա, – Բայց ըսածնուուդ պէս՝ երեսնուուդ ընելու են, կամ աւելի աղէկ՝ գրելու են, որ վէճ մը բացուի ու ժողովուրդը լուսաւորուի»: Եկ առաջարկում է Խմբագրին՝ շարադրել իր տեսակետները ազգային կրթության շուրջ, որպեսզի կարողանան նրան և Խորիմյան Հայրիկին պաշտպանել³⁵:

Պետք է ասել, որ կրթության, տնտեսության և ազգային կյանքի այլ կարևորագույն հարցերի շորջ Խորիմյան Հայրիկին նման հայացքները պատահական չէին: Դրանք արդյունք էին նրա բացառիկ լայնախոհության և ազատամտության, ինչն ամենից շատ էր շահագրգուռմ Ե. Տեմիրճիպաշյանին: Երբ Կ. Պոլսի՝ Ասիական ընկերության լսարանում Ուեմեոս Պերպերյանի «Կին» խորագրով բանախոսության համար, «ուր ինչ ինչ դիտողութիւններ ըրած է Ս. Գրքին դէմ», կրոնական տեսուչը պահանջում է «քննութիւն մը» անցկացնել, դա առաջ է բերում Ե. Տեմիրճիպաշյանի անկեղծ տարակուսանքն ու ընդգումը. «Հայաստանեայց ազատ եկեղեցւոյ ծոցն, ազատամտութեամբն հոչակասոր Խորիմեան Ս. Հայրիկի (ընդգծումը մերն է. – Պ. Դ.): Ալտենապետութեան ներքեւ գտնուած կրօնական ժողովոյ մ'օրով, – բացականչում է նա, – իննեւտասաններորդ դարու վերջին քառորդին մէջ, Հայ ազգին կրօնական Տեսուչն Հաւատաքննութիւն կը խնդրէ: Եւ որո՞ւ դէմ: Ազգային փառացն ու պատույն ամենին նախանձախնդիր բազմարդիւն գործիչի մը դէմ»: Ապա նաև եզրափակում հեղնական տոնով՝ «Յառաջադիմութեան մէջ ենք ...»³⁶: «Սիրաք եւ Սամուէլ (Կրթական դասեր)» գրվածքում Խորիմյանը ներկայացնում էր քաղաքակրթության դիմավոր չափանիշները, որոնց պետք է ձգտի նաև հայ ազգը: «Ինսերորդ դասով կը ճառէ Սիրաք թէ ինչպէս ինքնաշխատութիւն, հանճար եւ ընկերական զօրութիւն, այս երեք հզօր դաշնակիցներ միանալով քաղաքակրթեցին զաշխարհ, – գրում է նա, – ինքնաշխատ հանճար ծնաւ դիտեր, արուեստներ, այլ ընկերական զօրութիւն զարգացուց. Եւ այսպէս այս երեք անզէն դաշնակիցներ աշխարհիս տիրեցին»³⁷:

Ե. Տեմիրճիպաշյանի համար շատ գնահատելի էին նաև Խորիմյան Հայրիկի արդիական հայացքներն ազգային կյանքում ընտանիքի դէրի ու նշանակության վերաբերյալ: Նրան հատկապես հոգեհարազատ էին «Դրախտի ընտանիք (Ի պէտ Հայոց ընտանեաց)» հայտնի գրվածքի՝ Ընթերցողներին ուղղված «Նախաբան»-ում Հայրիկի արտահայտած այն մտքերը, թե «առանց մտաւոր եւ նիւթական հարստութեան» հնարավոր չէ «Եւրոպական ժողովրդոց ճոխ կեանքը վայելել»: Ուրեմն, կոչ էր անում Սրբազանը՝

³⁵ «Երկրագունատ», 1886, թիւ 8, էջ 345:

³⁶ «Երկրագունատ», 1887, թիւ 5–6, էջ 203:

³⁷ Ամբողջական երկեր Խորիմեան Հայրիկի, Նիւ Եօրք, 1929, էջ 309:

«Ծանի՛ր, այդ կեանքը, այդ յառաջաղիմութիւնը», որ գարերի ընթացքում ձեռք է բերվել «ճակատի անխոնջ քրտինքով» և բազում զոհերով: Հորդում էր չհետևել օտարների՝ նորության անվան տակ տարածվող զեղիս ու անբարո բարքերին, այլ «ազնիւ ժողովրդոց բարի ու պարկեշտ օրինակին», որոնց «լոյս եւ առաջնորդ՝ ուսումն, դաստիարակութիւն եւ տնտեսութիւնն է», որովհետև, ըստ նրա, «ուսման լուսով հաց կը գտնեն, դաստիարակութեամբ հոգին եւ սիրտ կրթելով բարի ընտանիք կը կազմեն, իսկ տնտեսութեամբ հացին սեղան եւ այլ կեանքի պիտոյքները չափով ու կշռով կը մատակարարեն միշտ հոգալով ապագայի անստոյգ օրերն»: Քանզի, համոզված էր Խրիմյան Հայրիկը, «մարդ իւր ներկային մէջ կամ զգաստութեամբ կամ ապշութեամբ իւր ապագայ օրերն ինքնին ձեռօք կը պատրաստէ. զի ներկան ապագային հիմն է եւ ապագան ներկային յաջորդութիւն եւ շենք»³⁸: «Աղջկան մը օրագիր»-ում անդրադառնալով այդ խնդրին՝ Մելանիան գրում է. «Ընտանիքն ըստինքեան ցամաք նիւթ մը կը թուի, սակայն քանի կը յառաջանամ ընթերցմանս մէջ այնքան կը համոզուիմ, թէ նիւթոց ամենահարուստն է ընտանիքը: Խրիմեան Հայրիկ Սահմանադրութեան պահպանութեան համար ուխտին ժամանակ մեր ազգային օրինաց ծագման վրայ խօսած եւ զայն անուանած էր քրիստոնէութեան արդասիք, արդասիք Հայաստանեայց ազատ եկեղեցւոյն»³⁹:

Ե. Տեմիրճիպաշյանը հայ ազգի «մեծ արշալոյսի» ավետյալն էր համարում Խրիմյան Հայրիկին, ըստ նրա, միանգամայն հասկանալի ու բացատրելի էին «այն սրտեռանդն մեծարանքն, որք կը մատուցուին ազգովին Սրբազնն Հայրիկին ...»⁴⁰: Ուրեմն և պատահական չէ, որ «Մակրինէ» նորավեալի հերոսներից մեկը՝ Պետրոս աղան, որին Եղիան ընութագրում է որպես իր բարի հոր վաղեմի բարեկամը, խոստովանում է, թէ «Նահնապարեամսէն ու Խրիմեամսէն սորվեցանք որ ազգութիւնը ունինք, ու այս ազգութիւնը պահելը մեր ամենէն մեծ պարտըլիանութիւնն է: Ասանկ կամաց-կամաց արթնցանք ...»⁴¹ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.):

Յուրատեսակ համեմատական անցկացնելով ժամանակի հայտնի դեմքերից մեկի՝ աստվածաբան, խմբագլր Հովհաննես Տերոյենցի (Հովհաննես պատվելի) և Խրիմյան Հայրիկի միջև Ե. Տեմիրճիպաշյանն ընդգծում էր, որ նրանք «տրամագծօրէն ներհակ ձգտումներ» էին ներկայացնում: Եթե Տերոյենցի համար «Միշտ մեծ ուսումն էր ... ընդհանուր եկեղեցական պատմութիւնն», ապա Խրիմյանի համար «մեծագոյն ուսումն էր եւ է յաւէտ Ազգային պատմութիւնն, Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւնը»: Եվ ապա, եթե «Տերոյենցի տիեզերական եկեղեցին խակ իր տան չափ մեծ է միայն. մինչ Խրիմեանին համար ... եկեղեցին մեծ է տիեզերքին չափ. Խրիմեանի եկեղեցւոյն մէջ ոչ միայն Աստուած կայ, այլ կայ մարդն՝ որ կը յայտարարէ թէ անկարող է ըմբռնել զԱստուած ...»⁴²:

³⁸ Նույն տեղում, էջ 184–185:

³⁹ «Երկրագունտ», 1985, թիւ 9, էջ 462:

⁴⁰ Գիշ, 1885, տետր երկոտասաներորդ, էջ 198:

⁴¹ Գիշ, 1884, տետր հինգերորդ, էջ 91:

⁴² «Երկրագունտ», 1888, թիւ 6, էջ 285:

Ժամանակակիցների բազմաթիվ վկայություններից հայտնի է, որ Ե. Տեմիրճիպաշյանը ևս XIX դ. վերջին քառորդի ամենից անվանի, սիրված ու մեծահամբավ դեմքերից էր: Բնորոշ է, օրինակ, գրող, հրապարակախոս, խմբագիր Սուլբեն Պարթևյանի հուշային դրվագներից մելլո, ըստ որի՝ Եղիայի մահից երկու տարի անց նաև երանությամբ էր հիշում ամեն տարի Ազգային Սահմանադրության տոնի խանդավառ հանդեսներից մնացած իր տպավորությունները: «Հայրիկին ձեռքէն բռնած կ'երթայինք Պոլիս, Սիրքէնիէն շրմէն-տըֆէն՝⁴³ կը նստէինք, Ետի-Գուլէ դուրս կ'ելլէինք. Մ. Փրկիչի մատուրը կը մտնէինք, — գրում է նա, — յետոյ պարտէզը ասրբուած շքասեղանին կը մասնակցէինք, ու յակտենական ձէթով կանկառն ու խորոված միաի կտորը ծամելով՝ անհանդարտ աչքեր կը պտտցնէինք չորս դիմիս... Ու բաժականակերը կը սկսէին շքասեղանին վերին ծայրէն:

- Խօսողը ո՞վ է, հայրի՞կ...
- Խրիմեան Հայրիկն է, տղաս ...
- Այս մարդը ո՞վ է ...
- Մինաս Չերազն է, տղաս, մե՛ծ մարդ է, ազգասէ՛ր, խելացի՛ ...
- Ա՞ս ...
- Ոէժէոս Պէրպէրեանը ...
- Ա՞ս ...
- Եղիա Տէմիրճիպաշեանը ...

... Ու հոեսորդներու շարքը կ'երկարաձգուէր անվերջ ու հոյապանծ ... Ու մենք՝ յափշտակուած՝ մտիկ կ'ընէինք ազգին մտառորական առաջնորդներուն... Ի՞նչ հսկամեր կը թուէինս անոնք մեզի և ի՞նչ պատկառանք մը կար անոնց բոլորտիքը, զանոնք շրջապատող, անոնց շրմներէն կախուող ամբոխին վրայ: ... Մեծին ու մեծութեան յարգանքն ունէր մեր ժողովուրդը, ու արժանիքին ու գեղեցկութեան առջեւ հիացումի վսեմ ընդունակութիւնը»⁴⁴ (ընդգծումները մերն է.՝Պ. Դ.):

Թերեւս ավելորդ է որևէ բան ավելացնել այդ գնահատականին:

Եզրակացություն

Խրիմյան Հայրիկը ոչ միայն ժամանակի ազգային ու կրոնական նշանավոր գործիչներից էր, այլև համազգային մտածողության տեր անձնավորություն, ում համար ամենից կարևորն աշխարհասփյուռ հայության համախմբումն ու միասնականությունն էր՝ հանուն Հայրենի ժողովրդի և Հայրենիքի առջև ծառացած բարդ ու դժվարին խնդիրների լուծման: Այդ հարցում նա բարձր էր գնահատում Վենետիկի Միիթարյանների, մասնավորա-

⁴³ Յրանս՝ գնացք:

⁴⁴ «Դաշինք» (Զմիւռնիա), 1910, թիւ 247:

պես՝ Հայր Ղևոնդ Ալիշանի ծառայություններն ու վաստակը. այդ վերաբերմունքը փոխադարձ էր: Խրիմյան Հայրիկն օժտված էր նաև բացառիկ ստեղծագործական ձիրքով: Ժամանակի մեծահամբավ դեմքերից՝ գրող, հրապարակագիր, իմաստասեր, խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանի համոզմամբ, նրա անհատականության մեծությունը չափելի էր ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մասշտաբների մեջ:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ — բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ. Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ՝ է 3 մենագրության, բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

REFERENCE

- Alishane zhamanakakitsneri husherum, Yerevan, 1969 (In Armenian).
 “Araks” (S. Peterburg), 1887, girk A (In Armenian).
 Amboghdjakan yerker Khrimyan Hayriki, Niu Eork, 1929 (In Armenian).
 “Dashink” (Zmivrnia), 1910, tiv 247 (In Armenian).
 “Grakan yev Imastasirakan Sharzhum” (K. Polis), 1883, tetr E; 1884, tetr hingerord; 1885, tetr eoterord; tasnerord; metasanerord; erkotasnerord; 1886, tetr uterord; innerord; 1887, tetr vetserord (In Armenian).
 Khrimyan Hayrik. Yerker, Yerevan, 1992 (In Armenian).
 “Masis” (K. Polis), 1869, tiv 924; tiv 927 (In Armenian).
 “Nor keank” (K. Polis), 1879 (In Armenian).
 Oshakan Y. Hamapatker arevmtahay grakanutean, Antilias, 1956 (In Armenian).
 Raffi. Yerkeri zhoghovadsu tasnerku hatorov, h. 1, Yerevan, 1983 (In Armenian).
 Teodik. Amenun taretsoytse, K. Polis, 1916–1922 (In Armenian).
 Tumanyan Hovh. Yerkeri liakatar zhoghovadsu 10 hatorov, h. 5, Yerevan, 1994 (In Armenian).
 “Yerkragund” (K. Polis), 1886, tiv 4; tiv 5; tiv 6; tiv 7; tiv 8; 1887, tiv 5–6; 1888, tiv 6; tiv 11; 1985, tiv 9 (In Armenian).
 Zhamanakakitsnere Komitasi masin, Yerevan, 1960 (In Armenian).

ВИДНЫЕ ДЕЯТЕЛИ ВРЕМЕНИ О ХРИМЯНЕ АЙРИКЕ

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Р е з ю м е

Ключевые слова: Хrimyan Aйrik, Егия Темирчипашян, Отец Гевонд Алишан, Минас Чераз, Комитас, Ов. Туманян, патриарх, католикос, «Сирак и Самуил», «Райская семья», «Вангуйж», «Айгуйж».

Выдающийся национально-общественный, духовно-культурный деятель Католикос Всех Армян Хrimyan Aйrik (Мкртич А. Ванеци, 1820–1907) с самого начала своей деятельности снискал широкую известность в народе своим безупречным поведением, патриотическими поступками. Многие известные деятели писали в его адрес хвалебные и восторженные слова, отмечая интересные эпизоды и истории, связанные с Aйриком (Г. Алишан, Раффи, Е. Темирчипашян, М. Чераз, Комитас, Ов. Туманян и другие).

Хrimyan Aйrik был общенациональным мыслителем. Самым главным он считал сплочение и единство армян всего мира для решения сложных проблем, стоящих перед родным народом и Родиной. Он постоянно обращался к покинувшим родину армянам, уговаривая их вернуться, чтобы вместе обустраивать Армянский дом. Хrimyan Aйrik высоко оценивал заслуги мхитаристов Венеции, особенное уважение испытывал к Отцу Гевонду Алишану, и это отношение было взаимным.

К Хrimyanu Aйriku с высоким благоговением относился также один из самых известных деятелей того времени – писатель, публицист, философ, редактор Егия Темирчипашян, считая его не только одним из выдающихся национальных и религиозных деятелей своего времени, но и человеком, наделенным яркими творческими способностями, писательским талантом. По убеждению Егии Темирчипашяна, величие личности Хrimya Aйrika измеримо не только в национальном, но и в мировом масштабе.

*Петрос Демирчян – д. филол. н., старший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, секретарь правления Союза писателей Армении. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.
pdemirchyan@mail.ru*

PROMINENT FIGURES OF THE TIME ABOUT KHRIMYAN HAYRIK

PETROS DEMIRCHYAN

S u m m a r y

Key words: *Khrimyan Hayrik, Yeghia Temirchipashyan, Ghevond Alishan, Minas Cheraz, Komitas, Hovh. Tumanyan, patriarch, catholicos, “Sirak and Samuel”, “Paradise Family”, “Vanguyzh”, “Ayguyzh”.*

An outstanding national, public, spiritual and cultural figure Catholicos of All Armenians Khrimyan Hayrik since 1893 (Mkrtich A. Vanetsi, 1820–1907), from the very beginning of his activity gained wide popularity among the people for his impeccable behavior, patriotic deeds. Many famous people wrote words of praise and admiration to him (G. Alishan, Raffi, Ye. Temirchipashyan, M. Cheraz, Komitas, Hovh. Tumanyan and others), noting interesting episodes and stories connected with Hayrik.

Khrimyan Hayrik was a nationwide thinker. For him, the most important thing was the rallying and unity of the Armenians of the whole world to solve the complex and difficult problems facing his native people and homeland. Therefore, every time he sent out invitations to all Armenians who had left their homeland, persuaded them to return in order to improve the Armenian house together.

Khrimyan Hayrik highly appreciated the merits of the Mkhitarists of Venice; he was especially fond of Father Ghevond Alishan, and this relationship was mutual.

Khrimyan Hayrik was also highly valued by one of the most famous figures of that time – writer, publicist, philosopher, editor Yeghia Temirchipashyan, not only as one of the outstanding national and religious figures of his time, but also endowed with bright creative abilities and writing talent. Unfortunately, his opinions have hardly been mentioned so far. According to Yeghia Temirchipashyan, the greatness of Khrimyan Hayrik's personality is measurable not only on a national but also on a global scale.

Petros Demirchyan – Doctor of Sciences in Philology. Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abegian, Executive Secretary at Writers' Union of Armenia. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary, literary-critical articles. pdemirchyan@mail.ru